

Վարքագծի կանոններ

Հայաստանի ՄՌ Ասոցիացիայի (այսուհետև Ասոցիացիա) վարքագծի կանոնները սահմանում են Ասոցիացիայի անդամների մասնագիտական և անձնական վարքագծի ստանդարտները/կանոնակարգը:

Անդամակցելով Հայաստանի ՄՌ Ասոցիացիային, Ասոցիացիայի անդամը հաստատում է սույն վարքագծի կանոններին հետևելու իր պատրաստակամությունը և գիտակցում է իր անձնական պատասխանատվությունը՝ գործելու սույն կանոններին համապատասխան:

Մեր առաքելությունը

Ասոցիացիայի հիմնական առաքելությունը ժամանակակից համաշխարհային փորձի և ազգային առանձնահատկությունների համադրման միջոցով Հայաստանի Հանրապետությունում մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում մասնագիտական համայնքի ստեղծումն է, որը կնպաստի ՄՌ կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը:

Մեր տեսլականը

Ասոցիացիայի անդամները կարևորում են արևմտյան ստանդարտներին համապատասխան ՄՌ կառավարման դպրոցի ստեղծումը, որը իր մեջ կմիավորի արևմտյան դպրոցի լավագույն փորձը՝ համակցված ազգային առանձնահատկությունների հետ:

Մեր նպատակները

Ասոցիացիայի գործունեության նպատակներն են:

- Ուսուցում և մասնագիտական զարգացում
- ՄՌԿ դաշտի բարելավում
- ՄՌ Ակումբ հանդիպումներ և միջոցառումներ
- ՄՌ ոլորտի հանրայնացում

Վարքագծի կանոններ

Որպես Մարդկային Ռեսուրսների մասնագետ և Հայաստանի ՄՌ Ասոցիացիայի անդամ ես որդեգրում եմ ստորև նշված սկզբունքները:

Մասնագիտական վարքագիծ

- Ցուցաբերել մասնագիտական և անձնական վարքագծի բարձր ստանդարտներ

Մասնագիտական աճ

- Ձգտել ՄՌ կառավարման ոլորտում շարունակական մասնագիտական աճի:
- Գործունեությամբ աջակցել ՄՌ ասոցիացիայի առաքելության և նպատակների իրականացմանը՝ ՄՌ կառավարման ոլորտը զարգացնելու նպատակով:

Ներքին կոմունիկացիա

- Ասոցիացիայի անդամների հետ հաղորդակցվելիս լինել ազնիվ, թափանցիկ և ճշտապահ:

Օրենսդրական պահանջներ

- Պահպանել գործունեությանը և ոլորտին վերաբերող բոլոր օրենսդրական պահանջները:

Անձնական շահ

- Ձեռնպահ մնալ իմ զբաղեցրած պաշտոնը հանուն անձնական շահի օգտագործելու հնարավորությունից:
- Գիտակցել, որ ՄՌ ասոցիացիայի հանդիպումները, միջոցառումները և այլ գործունեությունը Ասոցիացիայի անդամների զարգացմանն ու փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումներ են, այլ ոչ սեփական անձի կամ կազմակերպության հետաքրքրությունների առաջխաղացման (promotion) հնարավորություն:
- Ջերժ մնալ Ասոցիացիայի անունը սեփական շահի համար օգտագործելու հնարավորությունից:

Ինֆորմացիայի գաղտնիություն

- Պահպանել մասնագիտական գործունեության, այդ թվում նաև Ասոցիացիայի հանդիպումների ընթացքում ձեռք բերված ինֆորմացիայի գաղտնիությունը:

Շահերի բախում

- Ասոցիացիայի խորհրդի անդամներին տեղյակ պահել Ասոցիացիայի անդամների միջև կամ գործունեության վերաբերյալ ցանկացած առկա կամ ակնկալվող շահերի բախում, որը կարող է ազդել Ասոցիացիայի գործունեության կամ բարի համբավի վրա: